

- փաթեթվածքում սալերի ընդհանուր քանակը,
- տեխնիկական հսկողության դրոշմակնիքը:

4 Անվտանգության պահանջները և շրջակա միջավայրի պահպանումը

4.1 Սալերի արտադրության համար օգտագործվող փքված պեոլիտի ավազը լինելով ոչ թունավոր, չայրվող, հրդեհապայթունավտանգ նյութ, բավարարում է ԳՕՍՏ 12.1.005 տեխնիկական պահանջներին և դասվում է III <Փ> վտանգավորության խմբին: Սալերի արտադրության սենքերում փքված պեոլիտից առաջացած փոշու սահմանային թույլատրելի կոնցետրացիան (ՍԸԿ) աշխատանքային միջավայրի օդում չպետք է գերազանցի 4.0 մգ/մ³:

4.2 Սալերի արտադրությունում պեոլիտային փքված ավազի հետ աշխատելու ժամանակ պետք է կիրառել անհատական պաշտպանության միջոցներ ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի «Անհատական պաշտպանության միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1631-Ն որոշմամբ, ԳՕՍՏ 12.4.013, ԳՕՍՏ 12.4.041 ստանդարտներով սահմանված պահանջներին համապատասխան:

4.3 Բեռնման- բեռնաթափման աշխատանքների կատարման ժամանակ պետք է պահպանվեն ԳՕՍՏ 12.3.009 ստանդարտով սահմանված անվտանգության պահանջները:

5 Ընդունման կանոնները

5.1 Սալերը պետք է լինեն ընդունված արտադրող կազմակերպության տեխնիկական հսկողության ծառայության կողմից:

5.2 Սալերն ընդունում են խմբաքանակներով: Խմբաքանակ է համարվում միննույն մակնիշի սալերի ցանկացած քանակ, որոնք պատրաստված են միննույն տեսակի և որակի հումքից և ձևակերպված են որակի մասին մեկ փաստաթղթով:

5.3 Սալերի յուրաքանչյուր խմբաքանակ պետք է ուղեկցվի որակի մասին փաստաթղթով, որտեղ պետք է նշված լինեն.

- արտադրողի անվանումը, կամ ապրանքային նշանը (առկայության դեպքում), գտնվելու վայրը,

- արտադրանքի անվանումը, մակնիշը և եզրաչափերը,